

տիրացումն, քանի մը ոսկիին հոտէն հարբած՝ պատրաստուեցաւ օծման կարգը կատարելու. ժողովուրդը բողոքեց, բայց մնաց անլսելի. ժողովուրդը դիմագրաւեց կառավարիչը. իսկ վերջինս մանրամասն տեղեկանալով եղելութիւնը և բացարձակ անարդարութիւն տեսնելով մի աղայականութեան՝ իր երեսը դարձուց, խաղաղացուց զայրացած ժողովրդին սրտերը և իրաւունքը վճռեց որ ժողովրդինն է. կասեցաւ քահանայապետութեան կարգը, ջուրն ընկաւ խայտառակ քահանայացուն և ամօթապարտ ինքզինքը հազիւ նետեց Ամերիկա...

ԱՎՕ

(Ղերջը յաջորդ համարում)

## ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹԱՎԱՆ ԳՈՐԾԸ ԵԱՊՈՆԻԱՅՈՒՄ \*)

Վաթսուենական թուերին էր. Եպպոնիան կամացուկ, բայց միանգամից նետուեց եւրոպականութեան գիրկը... Քաղաքական չին ու մնասակար կարգերը տակնուվրայ եղան, և հաստատուեցին նոր կարգեր: Մարդկանց միտքը արագ կերպով յեղաշրջուեց. ընդունակ ու ճարպիկ եապոնացին անվախ կանգնեց քաղաքակրթութեան լոյսի առաջ, տեսաւ իր յետամնացութիւնը, չլուսահատուեց. առաջ ու անվերջ առաջ զնալով՝ հասաւ եւրոպացուն, իր յետը թողեց հարկան բոլոր ազգերին և իհարկէ՝ իր նախկին ուսուցիչ Չինաստանին էլ. եապոնացին դառաւ հեռու արեւելքում առաջին քաղաքակիրթ ժողովուրդը: Նա կոյր հետևող ու երկրպագու չեղաւ եւրոպական քաղաքակրթութեան, ընդհակառակը՝ նրանից վերցնելով ամենաընտիր մասերը՝ որոճում, լաւ մարսում էր և կազմում իր երկրի պայմանների համեմատ մի նոր բան. այս մի նոր բանը «եապոնական քաղաքակրթութիւնն» է:

Անշուշտ սա թէ հետաքրքիր է և թէ զարմանալի. դրա համար էլ մի խումբ գիտնականներ գովասանքով ու հրճուանքով են խօսում եապոնացիների առաջադիմութեան մասին: Ան-

\*) Այս յօդուածի փաստերը քաղուած են գլխաւորապէս Լ. Բ. Հաբ-  
ենի: «Народное образование въ Японіи» (Москва, 1904), գրքոյկից:

աւրանալի է այն փաստը, որ Նապոնիայի առաջադիմութիւնը հսկայական և ուշադրաւ է: Անկասկած սրանում առաջնակարգ դեր պիտի խաղար և այժմ էլ խաղում է Ժողովրդի կրթական գործը. իսկապէս այդ կողմից ինչ է ներկայացնում Նապոնիան:

Սոշոյր բարենորոգումներով յայտնի 1868 թուին Կիոտօ քաղաքում ժամանակաւորապէս կազմւում է կրթական մի մասնախումբ: Պալատական ու բարձրաստիճան պաշտօնեաներին առաջարկւում է օգնել ու գործակցել նոր-նոր դպրոցներ բաց անելուն: 1871 թ. ժամանակաւոր կրթական մասնախումբը ձևափոխուելով՝ ասւում է լուսաւորութեան միջխտրութիւն, որը իր խելացի ու արդիւնաւէտ գործունէութեամբ մեծ ազդեցութիւն ունեցաւ Նապոնիայի ապագայ բախտի վրայ: 1872 թ. հրատարակւում է կրթական օրէնքների ժողովածուն. սրա համեմատ ամեն մի ընտանիքի զաւակ՝ հարուստ թէ աղքատ անխտիր պարտաւոր են դպրոց մտնել, սկզբնական կրթութիւն ստանալ. այդ օրէնքով որոշւում են դպրոցների տեսակները, որտեղ ինչպիսի կրթական հաստատութիւններ են բացուելու եայն:

Երբ այդ ժողովածուն լոյս տեսաւ, այժմեան միկազօն (կայսրը)՝ այն ժամանակ դեռ 20 տարեկան երիտասարդ՝ դիմեց Ժողովրդին այս տեսակ հրովարտակով.

«Բոլոր գիտութիւնները ձեռք են բերւում կրթութեամբ՝ ակասած հասարակից մինչև ամենաբարձրը, որոնք անհրաժեշտ են պետական պաշտօնեային, գիւղատնտեսին, վաճառականին, արհեստաւորին, բժշկին և ընդհանրապէս ամեն մի մարդու իր մասնագիտութեան համաձայն: Այս հիման վրայ անհրաժեշտ է այնպէս տարածել կրթութիւնը, որ ո՛չ մի գիւղում չմնայ տղէտ ընտանիք եւ ո՛չ մի ընտանիքում չերեւայ տղէտ անդամ: Մինչև այժմ գիտութեան նուիրուած մարդիկ սպասում էին, որ դրանց կրթութեան մասին հոգ տանէր կառավարութիւնը: Սա սխալ հայեացք է, որը այնուամենայնիւ ունի իր պատմական հեռաւոր անցեալը: Իւրաքանչիւր մարդ պէտք է աշխատի սեփական ջանքերով ձեռք բերել գիտութիւն»:

Նապոնիայի համար նորութիւն չէր գրագիտութիւն, ուսում: Դեռ 1852 թ. ազգաբնակչութեան 70 տոկոսը՝ թէ տղամարդ և թէ կին՝ գիտէր գրել և կարդալ: Նա ծանօթ չէր եւրոպական գիտութիւններին: Նապոնիայի քաղաքական նոր կեանքով և երիտասարդ կայսրի հրովարտակով նոր շրջան է սկըսւում կրթութեան համար:

Բացւում են մանկապարտէզներ, տարրական, միջնակարգ

ու բարձրագոյն դպրոցներ և համալսարան այն ձևով, ինչ ձևով վաղուց գոյութիւն ունէին քաղաքակիրթ Արևմուտքում:

Նոր կեանքի արշալուսին ժողովրդի կրթական գործում ամերիկացիները եղան առաջին ուսուցիչները. նրանց ազդեցութիւնը շատ մեծ էր և համարեա միևնոյն բարձրութեան վերայ էլ մնաց մինչև այսօր: Չնայած սրան՝ հեռատես ու հետաքրքիր հապոնացիներէք աչքաթող չարեց միւս քաղաքակիրթ երկիրները: Իզուր չէ ասուած. «Եապոնիան իր նաւատորմիզը կազմելիս աչքի առաջ է ունեցել Անգլիան, սկզբնական դպրոցներում աղջիկներին ու տղաներին միասին սովորեցնելը վերցրել է Ամերիկայից (Միացեալ Նահանգներէից), ուսուցչական սեմինարների կազմութիւնը՝ Ֆրանսիայից, համալսարանների կազմը, սարք ու կարգը՝ Գերմանիայից եայլն»:

Առաջին մանկապարտէզը բացուել է 1876 թուին: Այժմ Եապոնիայում գոյութիւն ունի 253 մանկապարտէզ (181 հասարակական և 72 մասնաւոր). այստեղ ընդունւում են 3 տարեկան երեխաներ, որոնք սովորում են մինչև 6 տարեկան հասակը: Ուսումը տարւում է ֆրէտրելեան սիստեմով, որի էութիւնն է այդ տարիքի երեխաներին զբաղեցնել զլիսաւորապէս ձեռքի աշխատանքով, մանկական խաղերով ու երգերով:

1901—2 ուսումնական տարուայ հաշուետուութիւնից երևում է, որ մանկապարտէզներում սովորելիս են եղել 12,477 տղայ և 11,030 աղջիկ, ընդամենը 23,507 երեխայ. դասատուներ եղել են 665:

Մանկապարտէզում սովորող երեխաները իրանց տարիքի համապատասխան բաժանուած են լինում երեք խմբի: Մանկապարտէզները երեխաներին պատրաստում են սկզբնական դրպրոցների համար՝ բաւարարութիւն և ուղղութիւն տալով նրանց մանկական անմեղ կարևոր ցանկութիւններին ու ձգտումներին. այս պատրաստութիւնը կարող է տալ նաև ընտանիքը, բայց ոչ այնպէս, ինչպէս ամեն տեսակ յարմարութիւն ունեցող և մանկական հասարակական կեանք ներկայացնող մի մանկապարտէզ:

Երեխան 6 տարեկանից սկսած մինչև 14 տարեկան հասակը պարտաւոր է զնալ սկզբնական դպրոցը:

Սկզբնական կամ տարրական դպրոցները գրեթէ համապատասխան են մեր մի և երկդասեան դպրոցներին, զանազանութիւնն այն է, որ դասընթացը տևում է 4—8 տարի: Սըրանցում աղջիկներ ու տղաներ միասին են սովորում:

Կառավարութիւնը այս սկզբնական դպրոցների նպատակը

որոշում է այսպէս. «Նրանք պիտի երեխաներին ներշնչեն բարոյական կրթութեան սկզբունքները, որպէսզի դրանցով կարողանան դարձնել նրանց բարի քաղաքացիներ. նրանք պիտի տան երեխաներին ընդհանուր գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են գործնական կեանքի համար, վերջապէս նրանք պիտի առանձին ուշադրութիւն դարձնեն փոքրերի ֆիզիկական դարգացմանը»:

Այդ նպատակին հասնելու համար անցնում են հետեւեալ առարկաները.— քարոյականութիւն, եապոններէն, չինարէն, թուաքանութիւն, մարմնամարզութիւն, աշխարհագրութիւն, եապոնացոց պատմութիւն, նկարչութիւն, երգեցողութիւն, ծեղքի աշխատանք եւ ծեղագործ աղջիկների համար: Շատ տարրական դպրոցներում աւանդում են երկրագործութիւնից կարեւոր գիտելիքներ: 8 տարուայ դասընթաց ունեցող սկզբնական ուսումնարաններում կան լրացուցիչ առարկաներ, օրինակ՝ անգլիերէն, հաշուապահութիւն կայլն:

Մի ուսումնական տարում պարապմունքները պէտք է լինին 32 շաբաթից ոչ պակաս. իւրաքանչիւր երեխայ պարտաւոր է դպրոց յաճախել 16 շաբաթից ոչ պակաս: Օրական լինում է 3—5 ժամ պարապմունք:

Սկզբնական կրթութիւնը պարտադիր լինելով՝ ամեն տեղ դպրոցական վարչութիւնը կամ հոգաբարձութիւնը կարող է պահանջել, որ ամեն մի երեխայ որոշուած տարիքին հասնելուց յետոյ ուղարկուի դպրոց: Զգնալու համար յարգելի պատճառներն են հիւանդութիւնն ու աղքատութիւնը: Դպրոց չգնացողների համարեան կէս մասը առաջանում է աղքատութիւնից: Սրա առաջն առնելու համար չունեորներին թոյլ են տալիս ձրի ուսում ստանալ կամ վճարել շատ չնչին գումար: Առհասարակ ուսում տալը փողով է: Սովորող երեխաների ծնողները այդ վճարը տալիս են կամ կանխիկ փողով, կամ բնական տուրքով, կամ անձնապէս աշխատելով:

1901—2 ուսում. տարում տարրական դպրոցների մէջ եղել են 26,659 ձրիավարժ եւ 47,011 քիչ վճարող: Առաջ այս արտօնութիւնները տրւում էին աւելի ընդարձակ կերպով:

Այսպէս թէ այնպէս դպրոց յաճախողների թիւը հետզհետէ շատանում է: Վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս հետեւեալը.

Դպրոցական հասակ ունեցող երեխաներից դպրոց են եղել զնալիս 1885 թուին միայն 49,03%: 1895 թ. այդ տոկոսը բարձրացել է 61,11-ի, իսկ 1901—2 թ. հասել է 88,08-ի:

Տասնեօթ տարուայ մէջ այնքան առաջադիմել, որ դպրոցական հասակ ունեցող 100 երեխայից 88-ը դպրոց յաճախէ և միմիայն 12-ը չգայ, շատ խոշոր և ուշադրութեան արժանի փաստ է: Աւելի մեծ թուով աղջիկները չեն գնում դպրոց, քան թէ տղաները: Եթէ իւրաքանչիւր սեռի համար առանձին վերցնենք, կը տեսնենք, որ տղաներից գնում են 93,1% տոկոս, իսկ աղջիկներից միայն 81,0%: Այս զանազանութիւնը մեծ մասով կարելի է այսպէս բացատրել. այն աղքատ ընտանիքները, որ անկարող են իրանց բոլոր երեխաներին կրթութիւն տալ, աւելի յարմար են դատում տղաներին դպրոց ուղարկել և աղջիկներին հետ մի կերպ տանը պարապել: Յամենայն դէպս տարիներին ընթացքում այդ տարբերութիւնը հետզհետէ բնական է և այժմ համարեա թէ հաւասարուել է:

Հետաքրքիր է աչքի առաջ ունենալ և այս համեմատութիւնը.

Ենպոնիայում տարրական դպրոց է յաճախում ամբողջ ազգաբնակչութեան 11 տոկոսը, Հնդկաստանում—1,88%, Ֆրանսիայում—14,8%, Անգլիայում—15%, Հիւս. Ամերիկայի Միացեալ-Նահանգներում—20,4%:

Բոլոր գիւղերում ու քաղաքներում տարրական դպրոցները ցանց են գցել. ամեն տեղ ուսումնարանի համար կառուցւում է յարմարաւոր շէնք, ոչ մի բան չէ խնայւում: 1901—2 ուս. տարում եղել է 27,010 սկզբնական դպրոց (26,609 հասարակական, 349 մասնաւոր և 52 պետական), որոնց մէջ սովորելիս են եղել 4,980,604 երեխաներ:

Շնորհիւ տարրական դպրոցների այժմ դժուար է պատահել մի ենպոնացու, որը լինի անգրագէտ:

Ուսումնապետն ու պատուասէր ենպոնացին իսկապէս միայն գիտելիքներ ձեռք բերելու յետեից չէ ընկնում, այլ ձգտում է խորապէս կրթուել. նա չի սիրում մարմնական պատիժներ. հէնց կայսերական հրամանով ձեռք արգելուած է դպրոցներում:

Ամեն մի գիւղում ու քաղաքում տարրական դպրոցների ուսումնական մասի հսկողութիւնը պատկանում է դպրոցական յանձնաժողովին կամ հոգաբարձութեան: Նաև սրա սլարտականութիւնն է հոգալ ժողովրդական դպրոցներ բաց անելու և պահպանելու մասին, հետեւել սովորողների յաճախելուն և այլն: Ենպոնացիները մէջ մտնում են նոյնպէս նոյն դպրոցի ուսուցիչները:

Որոշուած վկայագիր ունեցողները միայն կարող են դա-

աստու լինել. նրանք կամ քննիչ յանձնաժողովին պիտի քննութիւն տան, կամ աւարտած լինեն ուսուցչական սեմինարի:

Դեռ 1873—74 թ. բացուեցին առաջին ուսուցչական սեմինարները թուով ութը. յետոյ կամաց-կամաց շատանալով՝ այժմ հասել է մինչև 54-ի, որոնցում սովորում են 13,900 մարդ: 1890 թ. հաստատուել է երկու մանկավարժական բարձրագոյն դպրոց մէկը օրիորդների, միւսը տղաների համար: 190<sup>1</sup>/<sub>2</sub> թ. այդ բարձրագոյն դպրոցներում սովորում էին 529 տղայ և 331 աղջիկ:

Մեծ մասով ուսուցչական դպրոցներին կից լինում են մանկապարտէզներ, տարրական ու միջնակարգ դպրոցներ, որտեղ փորձնական դասեր են տեսնում ու տալիս անպագայ դասատուները:

Այս մասում կրթական գործը աւելի կատարեալ դարձնելու նպատակով՝ տղայոց մանկավարժական բարձրագոյն դպրոցին միացրել են Տոկիօի մանկավարժական ընդարձակ թանգարանը (մուզէյը), որը ունի երեք բաժանմունք. առաջինը պարունակում է ընտանիքում, մանկապարտիզում ու տարրական դպրոցում առարկայական դասատուութեան օժանդակիչ պարագաներ. երկրորդ բաժանմունքը ունի ընական գիտութիւնների դասատուութեան համար զանազան գործիքների, մոդելների ու կարտերի հաւաքածու. երրորդը ներկայացնում է տեխնիկական դպրոցների, երաժշտութեան, նկարչութեան և մարմնամարզութեան գործիքների ու պարագաների ժողովածու:

Թանգարանի ընթերցարանում կան մանկավարժական ամսագրեր ու գրքեր. այստեղ ցոյցի են դրուած դպրոցների համար որոշուած դասագրքերն ու քարտէզները: Վերջին հաշուետրուութիւնը (1901—2) ցոյց է տալիս, որ թանգարանը ունեցել է 68,399 այցելող և ընթերցարանից օգտուել են 12,011 մարդ:

Ուսուցչական սեմինարում ուսումը շարունակւում է չորս տարի՝ շաբաթական 34 դաս պարապելով:

Այնտեղ անցնում են հետեւեալ առարկաները.— ըարոյականութիւն, մանկավարժութիւն, մանկավարժութեան պատմութիւն, եապոններէն, չինացոց գրականութիւն, ընդհանուր եւ եապոնական պատմութիւն, ընդհանուր եւ եապոնական աշխարհագրութիւն, թուաքանութիւն, երկրաչափութիւն, ալգեբրա, հաշուապահութիւն, ֆիզիկա, քիմիա,

քուսաքանութիւն, կենդանաքանութիւն, բնախօսութիւն (ֆիզիօլոգի), հանքաքանութիւն, գրութիւն (չինարէն եւ եսպոններէն), երաժշտութիւն, մարմնամարզութիւն, օտար լեզուներ (առանձին ուշք դարձնելով խօսակցութեանը), երկրագործութիւն, քաղաքատնտեսութիւն եւ ձեռքի աշխատանք:

Սկզբնական դպրոցներում ուսուցիչների մեծամասնութիւնը տղամարդիկ են: 1901—2 թ. նոյն դպրոցների մէջ եղել են 102,700 ուսուցիչ ու վարժուհի. չնայած սրան՝ 39,928 ազատ տեղ է մնացել դասատուների համար: Դպրոցներն այնպէս արագ կերպով են շատանում, որ սեմինարները չեն կարողանում հասցնել դասատուներ:

Ուսուցչութեամբ պարապողները մեծ մասով 25—45 տարեկան են: 15 տարուայ ծառայութիւնից յետոյ ուսուցիչն ըստանում է կենսաթոշակ, որը հետզհետէ բարձրանում է մինչև 60 տարեկան հասակը:

Երկար տարիներ ծառայող ուսուցիչը երբ հրաժարուի, կը ստանայ բաւականին խոշոր դրամական ընծայ: Մեռած ուսուցիչների ընտանիքներին տրւում է միանուագ օժանդակութիւն և նշանակում է թոշակ:

1901—2 թ. միջնակարգ դպրոցների թիւը եղել է 242, նրանցում սովորողներ 88,391 և դասատուներ 4233:

Միջնակարգ դպրոցները երկու նպատակ ունին. նախ՝ բարձրագոյն դպրոց մտնելու համար են պատրաստում և երկրորդ՝ գործնական պաշտօնի համար: Սրա համապատասխան էլ տարւում է ուսումը: Հինգ տարուայ դասընթաց է: Ովքեր մտադիր են միջնակարգ կրթութեամբ բաւականանալ, նրանք հինգերորդ տարուանից սկսում են լսել լրացուցիչ դասընթացներ (կուրսեր), օրինակ՝ արհեստագիտական, գիւղատնտեսական ու առևտրական, ընտրելով իրանց ցանկացած մասնագիտութիւնը: Լրացուցիչ մասնագիտական դասընթացին լինում է շաբաթական 28 ժամ պարապմունք: Վերջին տարին նուիրւում է բացառապէս մասնագիտական զբաղմունքներին:

Միջնակարգ դպրոցում ընդհանուր զարգացում տուող առարկաներն են.

| Առարկաները                                                                                    | Չարաթական<br>դասերի թիւը | Դանի տարի                                            |
|-----------------------------------------------------------------------------------------------|--------------------------|------------------------------------------------------|
| 1. Բարոյագիտութիւն (էթիկ)                                                                     | 1                        | 4                                                    |
| 2. Նապոններէն և շինացոց գրականութիւն                                                          | 5                        | 4                                                    |
| 3. Առաջին օտար լեզու (անգլիերէն)                                                              | 5—7                      | 4                                                    |
| 4. Երկրորդ » » (գերմ. կամ ֆրանս.)                                                             | 3—4                      | (2 վերջին տարի)                                      |
| 5. Ընդհանուր աշխարհագրութիւն                                                                  | 1—2                      | 4                                                    |
| 6. Նապոնական և ընդհանուր պատմութիւն                                                           | 1—2                      | 4                                                    |
| 7. Մաթեմատիկա (երկրաչափութիւն, աղբերա, թուարանութիւն, բարձր աղբերա, եռանկիւնաչափութիւն կային) | 4<br>3                   | 3<br>1                                               |
| 8. Բնական պատմութիւն (բնախօսութիւն, առողջապահութիւն, կենդանաբանութիւն և բուսաբանութիւն)       | 1—3                      | 3                                                    |
| 9. Ֆիզիկա, քիմիա և էլեկտրականութիւն                                                           | 1<br>2<br>3              | 1 (երկրորդ տարի)<br>1 (երկրորդ » )<br>1 (չորրորդ » ) |
| 10. Գրութիւն                                                                                  | 2<br>1                   | 1 (առաջին տարի)<br>1 ( » » )                         |
| 11. Նկարչութիւն                                                                               | 2<br>1                   | 3<br>1                                               |
| 12. Երգեցողութիւն                                                                             | 2                        | 2                                                    |
| 13. Մարմնամարզութիւն                                                                          | 3—5                      | 4                                                    |

Այս ցուցակից երևում է, որ միջնակարգ դպրոցի ծրագրւում առաջնակարգ տեղ է տրուած անգլիերէն լեզուին, որին աւելի դասեր են նուիրուած, քան թէ եապոններէնին: Եապոնեայի աշխարհագրութիւնը անցնում են միայն սկզբնական դպրոցներում: Նոյնպէս առանձին ուշադրութիւն են դարձրել ֆիզիկական կրթութեան վրայ, որը մի լաւ միջոց է առողջ սերունդ առնենալու և ժողովրդի անկման ու այլասերման առաջն առնելու:

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ միջնակարգ դըպրոցը աւարտածներից 60 տոկոս շարունակում է իր ուսումը, մօտը 10% մտնում է զինուորական ծառայութեան, 4%—ի չափ նուիրւում է մանկավարժական ասպարէզին, և մնացածները ընտրում են մի որևէ գործնական պարապմունք:

Ճարձրագոյն դպրոցն անուն կրող հիմնարկութիւնները իսկապէս մեծ կրթութիւն չեն տալիս, այլ միջնակարգ դպրոց աւարտածներին պատրաստում են համալսարան մտնելու: Այդ տեսակ ութը դպրոցներ կան, որոնցից միայն մէկը իրան կից

ունի ինժեներական բաժին. մնացածները բացառապէս պատ-  
րաստում են համալսարանի համար:

Սկզբում մի քանի բարձրագոյն դպրոցներին կից կային  
բժշկական բաժիններ, համարեա ֆելդշերական կուրսերին հա-  
մապատասխան: Նազասակի քաղաքում գոյութիւն ունեցող այդ  
տեսակ դպրոցներից մէկը պակաս ծառայութիւն չի արել ուսա-  
ների համար: Քանի որ Արեւելեան Սիբիրում չկար բակտերիո-  
լոգիական կայարան (հասարակ աչքով անտեսանելի մանր-  
րիկ կենդանիներին հետազոտող հիմնարկութիւն), կատաղած  
կենդանիներից կծուած հիւանդներն ուղարկւում էին Նազասա-  
կիի բարձրագոյն դպրոցի ուսուցչապետ Կուրիմոտոի \*) մօտ  
բժշկուելու, որի ձեռքի տակ աշխատանոցը (լաբորատորի)  
կազմակերպուած էր եւրոպական ձևով: Ուսուցչապետ Կուրիմո-  
տոն իր ցոյց տուած ծառայութիւնների համար ստացաւ ուս-  
սական շքանշան:

1901—2 ուսում. տարում բարձրագոյն դպրոցներում սո-  
վորել են 4,361 մարդ. 747 ընթացաւարտներից 584 մտել են  
Տոկիօի համալսարանը, 160-Կիոտօինը, իսկ մնացած երեքը  
յանձն են առել դանազան պաշտօններ:

Այս կարգի դպրոցների դասատուները ասւում են ուսուց-  
չապետներ և անպատճառ պիտի լինին համալսարանականներ:  
Նախապատուութիւն են տալիս եապոնացիներին. 190<sup>1</sup>/<sub>2</sub> թ.  
գործող 282 ուսուցչապետներից (պրոֆեսոր) միայն 24-ը եղել  
են օտարազգիներ:

Կան ուրիշ տեսակ դպրոցներ, որոնք իրանց կազմու-  
թեամբ երբեմն մօտենում են սկզբնական, երբեմն միջնակարգ,  
երբեմն էլ բարձրագոյն դպրոցին, բայց ոչ մէկին կատարելա-  
պէս համապատասխան չեն: Այսպիսի դպրոցների թիւը հաս-  
նում է 1,474-ի, 5398 դասատուներով և 96,184 սովորողնե-  
րով:

Եապոնիայում կայ երկու համալսարան՝ Տոկիօ և Կիոտօ  
քաղաքներում: Սրանից ամենահինն է Տոկիօինը, որ հիմնուած է  
1877 թուին:

\*) Խավկինը հետեւեալն է ասում ուսուցչապետի մասին. «Մի քանի  
տարի առաջ ինձ յաջողուց ծանօթանալ պրոֆես. Կուրիմոտօի հետ թեր-  
լինում, որտեղ նա աշխատում էր հանգուցեալ Վիրխովի մօտ: Միայն այն,  
որ տասնեակ տարիներ իր հայրենիքում գիտական-մանկավարժական գոր-  
ծունէութիւնից յետոյ նա եկել էլ Եւրոպա աշխատելու, ցոյց է տալիս նրա հե-  
տազօտող խելքն ու լուրջ վերաբերմունքը դէպի գործը: Նա երիտասարդ չէր.  
չնայած դրան՝ խիստ հետաքրքրւում էր ոչ միայն իր մասնագիտութեամբ, այլև  
Եւրոպայի հասարակական կեանքի բոլոր երևոյթներով»:

Տոկիօ մայրաքաղաքի համալսարանն ունի քարէ շէնք. դա հազուադէպ բան է Նապոնիայում, որովհետեւ մինչեւ անգամ կայսերական պալատն էլ, մեծ տաճարներն էլ շինուած են փայտից:

Հասարանները (առաջիտորիա) պատրաստուած են կրոպական ձևով ամֆիթէատրի նման: Համալսարանի անբաժան մասերն են կազմում հարուստ գիտական մուզէյները, գրադարան, բուսաբանական պարտէզ, աստղաբաշխական ու օդերևոյթական կայարաններ և հիանալի հիւանդանոցներ (կլինիկներ):

Մի քանի տարի Նապոնիայում ապրած ուսւ բժիշկ Շիմանսկիի վկայութեամբ՝ համալսարանական հիւանդանոցները պատրաստուած են օրինակելի կերպով: Նրանք առանձին-առանձին շէնքերով ցրուած են պարտիզի մէջ: Ամեն տեղ տիրում է անարատ մաքրութիւն և առատ լոյս: Անդամահատութեան դահլիճը ամբողջովին ծածկուած է ապակիներով: Պատերը, կահ-կարասին ներկուած են սպիտակ իւզաներկով: Հիւանդանոց մանելիս անխտիր բոլորը հանում են կօշիկները: Ախտահանութիւնը հասցրած է իդէալական վիճակի. անդամահատութեան ներկայ գտնուողները նոյնիսկ հիւանդանոցում լողաբան (վաննա) են ընդունում, որից յետոյ մերկ մարմինն հագնում են անտահանած խալատներ և մերկ ոտներին ախտահանած քոշեր (տուֆլիններ):

Նապոնացի մի քանի գիտնականներ իրանց աշխատութիւններով յայտնի են Եւրոպայում, ինչպէս օրինակ՝ պրոֆես. Կիտազատօ և Շիգա բակտերիօլոգիայի մէջ արած գիտներով հռչակ են ստացել:

Համալսարանին օժանդակ գիտական հաստատութիւններից ուշադրութեան արժանի են.

Լեզուաբանական ֆակուլտէտին կից գոյութիւն ունի պատմագրական յանձնաժողով, որը զբաղւում է պատմական և հնագիտական հետազոտութիւններով: Բնագիտական ֆակուլտէտում (բաժնում) կան աստղաբաշխական ու երկրաշարժի ուսումնասիրութեան կայարաններ, ակվարիում \*) և բուսաբանական պարտէզ: Վերջին երկու հաստատութիւնները բաց են և՛ հասարակութեան համար:

Բուսաբանական պարտէզն ուրիշ երկրներէց բերել է տա-

\*) Ակվարիումը ամենահետաքրքիր հիմնարկութիւններից մէկն է, ուր ծովային կենդանիներն ու բոյսերը պահւում են իրանց բնական վիճակով նրանց կեանքի ուսումնասիրութեան համար: Այնտեղ կարելի է տեսնել ծովի յատակը և ծովը իր շատ բնականներով:

լիս զանազան բոյսեր, որոնք իրանց բազմապիսութեամբ, գեղեցկութեամբ, սարք ու կարգով ներկայացնում են աչքի ընկնող երևոյթ: 190<sup>1</sup>/<sub>2</sub> թ. պարտէզն այցելել են 69,720 մարդ:

Ինժեներական բաժանմունքին կից շինուած են օրինակելի արհեստանոցներ ու աշխատանոցներ. գիւղատնտեսականն ունի փորձնական ագարակներ, մատաղ ծառերը հասցնող հողեր, կենդանիների համար ընդարձակ հիւանդանոցներ և նոյնպէս աշխատանոցներ (լաբորատորիաներ), որտեղ պատրաստւում են բուժարար շիճուկներ:

Համալսարանական գրադարաններից օգտւում են ուսուցչապետներ, ուսանողներ և երաշխաւորութեամբ նաև կողմնակի մարդիկ: Նա ունի 317,935 հատոր գիրք. կիսից աւելին (190,887) ևրոպական լեզուներով է, մնացածը՝ եապոններէն ու չինարէն:

Մի տարուայ ընթացքում գրադարանը բաց է եղել 300 օր, այցելել են 28,669 մարդ, և կարդացուել է 161,498 կտոր գիրք:

Համալսարանի և միւնիոյն ժամանակ կայսերական հասարակական ընդարձակ գրադարանի գիրեկտորն է զարգացած գործիչ՝ դոկտոր Տանակա, որը 80 թուականներին ուղարկուեց Եւրոպա և Ամերիկա յատկապէս գրադարանական գործն ուսումնասիրելու համար: Դոկտոր Տանակա իր ձեռքի տակ գրտնուած երկու գրադարանն էլ կատարեալ վիճակի հասցրեց և մտցրեց այն տեսակ յարմարութիւններ, որոնք մշակուած են ներկայ գրադարանական գիտութեան համաձայն:

Համալսարանն ունի վեց ֆակուլտետ—իրաւաբանական, բնագիտական, ինժեներական, բժշկական, լեզուաբանական և գիւղատնտեսական. այս վերջինին են միացրուած կենդանաբուժական (վետերինարական) գիտութիւնները:

Թէ համալսարաններում և թէ բարձրագոյն դպրոցներում պաշտօններ տրւում են մեծ մասով եապոնացիներին: 1901—2 տարում Տոկիօի համալսարանում եղել են 245 ուսուցչապետ ու դասատուներ, որոնցից միայն 18-ը եղել են օտարազգիներ— 8 գերմանացի, 3 ամերիկացի, 2 անգլիացի, 1 ֆրանսիացի, 1 ռուս, 1 շվեյցարացի, 1 իտալացի և 1 չինացի:

Եապոնացիները շատ ուրախանում և պարծենում են, որ Տոկիօի համալսարանում բացի տեղացիներից կան նաև միջառնի օտարազգիներ. հէնց նոյն ուսումնական տարում եղել են 8 չինացի, 3 կորէյցի, 2 Ֆիլիպպեան կղզիներից, 1 հնդկացի և 1 ամերիկացի:

Եապոնացի երիտասարդը մեծ նախապատրաստութիւն

պէտք է ձեռք բերած լինի համալսարան մտնելու համար. այդ պատճառով նա այն տարիքին է մտնում համալսարան, երբ Եւրոպայում աւարտում են: Տոկիոյ համալսարանի բժշկական ու լեզուաբանական մասը մտնողները միջին տարիքն է 23, իսկ մնացած մասերինը՝ 22: Համալսարանական դասընթացը տևում է միջին թուով 5 տարի: Այնպէս որ եապոնացի ուսանողը վերջացնում է համալսարանական դասընթացը մօտաւորապէս 27—28 տարեկան հասակում:

Յաջող կերպով համալսարանը աւարտած շատ երիտասարդներ պետական հաշուով ուղարկւում են արտասահման իւրանց մասնագիտութեան մէջ կատարելագործուելու:

1901—2 ուսում. տարում 116 երիտասարդ գիտնական (ղեւ իրանց երկրում հասած դոկտորի՝ «խակուշի»-ի աստիճանի) եապոնացիներ ցրուած էին Անգլիա, Ֆրանսիա, Միացեալ Նահանգները (Ամերիկա), Գերմանիա, Ռուսաստան, Բելգիա, Շվեյցարիա, Զինաստան, Հնդկաստան և Տաճկաստան: Նրանցից իւրաքանչիւրը զբաղւում է իր մասնագիտութեամբ. զանազան երկրներում. օրինակ՝ մէկն ուղարկուած է Միաց. Նահանգները և Գերմանիա, որ ուսումնասիրէ էլեկտրօտեխնիկան. միւսը պտտելով Ֆրանսիայի, Գերմանիայի, Աւստրիայի և Շվեյցարիայի դպրոցներում պիտի ծանօթանայ ընական գիտութիւնների դասատուութեան մեթոդների հետ. երրորդը Գերմանիայում ու Բելգիայում վաճառականական գիտութիւնների մէջ է կատարելագործւում, չորրորդը ուսումնասիրում է պետական իրաւագիտութիւն (государственное право) Աւստրիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում ևայլն: Ոչ սակաւ եապոնացիներ եկել են նաև Ռուսաստան, գլխաւորապէս Պետերբուրգի համալսարանը: Հէնց սրանից մի քանի տարի առաջ մի եապոնացի սովորում էր Պետերբուրգի գեղարուստական ճեմարանում:

Համալսարանաւարտները մեծ մասով մտնում են պետական ծառայութեան մէջ և կամ բարձրագոյն կրթական հաստատութիւններում դասախօսում են:

Կիոտո քաղաքի համալսարանը բացուել է 1897 թ.: Սա էլ ընդհանուր գծերով կազմուած է այնպէս, ինչպէս Տոկիոյ համալսարանը, միայն աւելի քիչ ֆակուլտետներ ունի: Համալսարանի շէնքը դեռ բոլորովին պատրաստ չէ. հետզհետէ պակասները լրացւում են:

1901—2 ուս. տարում Կիոտոյի համալսարանում եղել են 82 ուսուցչապետ ու դասատու և 490 ուսանող: Այս համալսարանին կից գիտական ու կրթական օժանդակ հիմնարկութիւն-

ներ շատ քիչ կան և եղածներն էլ նոր սկսուած ու սաղմային վիճակի մէջ են: Միայն գրադարանը բաւականին լայն ծաւալ է ընդունել և ունի 74,887 հատոր գիրք, որից 48,807-ը եապոններէն ու չինարէն են, իսկ 26,080 կտորը եւրոպական լեզուներով: Գրադարանը համարեա ամբողջ տարին (342 օր) բաց է եղել և ունեցել է 11,163 ընթերցող:

Բարձրագոյն կրթութիւնը արագ կերպով է առաջ գնում Ճապոնիայում, հաւանօրէն շատ շուտով Իրլանդայի նման ազգաբնակութեան հազար մարդուց մէկը կը սկսէ համալր-սարանում սովորել և կամ Շոտլանդիայի նման իւրաքանչիւր հինգ հարիւր մարդուց մէկը կ'ունենայ համալսարանական դիպլոմ:

Մեծ ուշադրութիւն է դարձրուած զործնական պարապմունքներ ունեցող ուսումնարանների վրայ: 1901—2 թ. Ճապոնիայում եղել են՝ 57 մասնագիտական դպրոց՝ 17,888 սովորողներով, և 401 տեխնիկական դպրոց՝ 36,787 սովորողներով: Տեխնիկական ուսումնարանները երեք տեսակ են լինում՝ տարրական, միջնակարգ և բարձրագոյն: Տոկիօի տեխնօլոգիական ինստիտուտը ամենալաւերից մէկն է համարւում աշխարհիս երեսին: Նա համալսարանի ֆակուլտետներից մէկն է և առաջադիմել է արագ կերպով. 1885 թուին ունէր 30 ուսանող, մինչդեռ 190<sup>1</sup>/<sub>2</sub> ուսում. տարում՝ 427: Եւրոպացի մասնագէտների կարծիքով առհասարակ Ճապոնիայում տեխնիկական (արհեստագիտական) կրթութիւնը հասած է շատ բարձր վիճակի: Տեխնիկական դպրոցների շարքն են գցել գիւղատնտեսական (79) և վաճառականական (41) ուսումնարանները:

Գործնական պարապմունքին վերաբերող համարեա ամեն տեսակ կրթական իմնարկութիւններ կան: Դարձեալ Տոկիօ քաղաքում ուշադրութեան արժանի են օտար լեզուների, գեղարուեստների, բարձրագոյն վաճառականական ու տեխնիկական դպրոցները:

Նոյնպէս ուշագրաւ և հետաքրքիր է Տոկիօի երաժշտական ճեմարանը: Սա գտնւում է կայսրուհու հովանաւորութեան ներքոյ, որը ժամանակառժամանակ այցելում է և հետեւում սովորողների առաջադիմութեանը: Կազմակերպւում են աշակերտական կոնցերտներ, որպէսզի ծնողներին ցոյց տան, թէ նրանց զաւակները որքան են առաջադիմել երաժշտութեան մէջ:

Ճեմարանում անցնում են ծայնական ու գործիքաւոր երաժշտութիւն եւ կոմպոզիցիա: Դասընթացը բաժանուած է երկու մասի. առաջին մասում պատրաստում են երաժշտու-

Թեան ուսուցիչներ և ուսուցչուհիներ միջին ու բարձրագոյն դպրոցների համար, իսկ երկրորդում՝ տարրականների համար:

Ենպէս ինքնակրթութիւնը աչքաթող չեն արել կոյրերի ու խուլերի կրթական գործը. յատկապէս նրանց համար գոյութիւն ունին գործնական պարապմունքներով 15 դպրոց՝ ընդհանուր զարգացողական դասընթացի հետ միասին: Իւրաքանչիւր աշակերտ իր ծնողի ընտրութեամբ՝ կարող է մի կամ երկու մասնագիտութիւն սովորել: Կոյրերին սովորեցնում են երաժշտութիւն, մասսաժ, իսկ խուլերին՝ նկարչութիւն, ատաղձագործութիւն, (столярное мастерство), դերձակութիւն ևայլն: Գործնական պարապմունքների դասընթացը տևում է հինգ տարի ամեն մի մասի համար, միայն մասսաժը երեք տարուայ դասընթաց է:

Իդէալ է ասել, որ Ենպէս իայում շատ տարածուած է մասսաժի գործածութիւնը: Ինչպէս ևրոպացի բժիշկներն են վկայում, գրեթէ առանց բացառութեան դրանով են զբաղւում կոյրերը և կատարում են շատ ճարպիկ ու վարպետ կերպով: Նրեկոյեան դէմ, երբ ընտանիքի բոլոր անդամները տուն են հաւաքւում, կոյր մասսաժիստը դանդաղ ման է զալիս ենպէսական քաղաքի փողոցներով և իր սրնգով նուագում է մեղամաղձիկ մի եղանակ, որից ճանաչում են նրան և կանչելով գործ են տալիս:

190<sup>1</sup>/<sub>2</sub> թ. կոյրերի ու խուլերի դպրոցներում սովորողներ թիւը եղել է 797, դասատուներինը—79: Գործնական կրթութեամբ կեանքի մի որեւէ ասպարէզի համար պատրաստելը կարմիր գծի նման անցնում է Ենպէս իայի դպրոցական սխառնմով սկսած տարրական ուսումնարանից մինչև համալսարանը, և սա կազմում է նրա կրթական գործի բնորոշ կողմը:

Ենպէս իայի քաղաքական նոր կեանքով եւրոպական քաղաքակրթութեան մօտենալով նոր կեանք ստացաւ նաև կանց կրթական գործը:

Դեռ չքաղաքակրթուած Ենպէսի մատ կարծիք ունէր կանանց մասին. նա էլ արեւելեան ուրիշ ազգերի նման աւելորդ էր համարում կնոջը կրթութիւն տալ. մինչև անգամ խելացի կնոջը համարում էր մնասակար արարած: Բայց ուրիշ էր 1871—72 թուականներին. գլխաւոր միևիստր Գուրոգա առաջարկեց երիտասարդ կայսրին իշխանական ընտանիքներից մի քանի երիտասարդ օրիորդների ուղարկել Ամերիկա կրթութիւն ստանալու: Գայսրը քաջալերելով այս առաջարկը՝ հետեւեալ կարծիքը յայտնեց.

«Մինչև այժմ կանայք հասարակական դիրք չեն ունեցել մեզանում, որովհետև նրանց համարել են ինչ-որ անխելք ա-

բարածներ. բայց եթէ նրանք կրթուեն և զարգանան, այն ժամանակ բոլորը կը սկսեն հարկ եղած յարգանքով վերաբերուել նրանց»:

Այսպէս ինքը կայսրը հաստատում է կանանց մասին եղած աննպաստ կարծիքը և մատնացոյց անում նրա դէմ կըռուելու միջոցները:

Կանանց կրթութեան առաջին կարապետները 1871 թուին ուղևորուեցին Ամերիկա: Մի տարի յետոյ եապոնական կառավարութեան ներկայացուցիչ մարկիզ (իշխան) Իսօ իր ճառերից մէկում ասել է Ամերիկայում. «Կրթութիւն տալով մեր կանանց, յոյս ունինք բարձրացնել մեր ապագայ սերնդի զարգացման մակերևոյթը. ահա թէ ինչու մի խումբ եապոնացի օրիորդներ մեզ մօտ են եկել սովորելու»:

Ինչպէս արդէն գիտենք, 1872 թուի դպրոցական օրէնսդրութեամբ, տարրական կրթութիւնը պարտադիր է և՛ տղայի, և՛ աղջկայ համար. չնայած սրան՝ դպրոցական տարիք ունեցող աղջիկներից միայն 81% է գնում տարրական ուսումնաբանները: Վերևում արդէն ասուեց, որ սրա պատճառը աւելի տնտեսական է:

Առանձնապէս հոգ են տանում կանանց բարձրագոյն կրթութեան վրայ: Այժմ գոյութիւն ունին կանանց «բարձրագոյն դպրոցներ» ընդարձակ ծրագրով: Դրանք մի քիչ նման են այստեղի օրիորդաց պրոգրիմազիաներին: Օրիորդներն ընդունւում են 12 տարեկանից ոչ պակաս, որոնք պիտի ունենան մօտաւորապէս երկդասեան դպրոցի պատրաստութիւն:

Դեռ ևս 1897 թուին օրիորդաց այդպիսի բարձրագոյն դպրոցների թիւն էր 25: Այն ինչ 1901—2 թ. հասել է 66-ի, որ նշանակում է՝ 2½ անգամ աւելացել է: Սովորողների թիւը 2,575-ից բարձրացրել է 17,215-ի, որ ասել է, համարեա եօթն անգամ է աւելացել: Այդ դպրոցներում դաս են տալիս և՛ տըղամարդիկ, և՛ կանայք. միայն ուսուցչուհիները համարեա՝ երկու անգար աւելի են ուսուցիչներից:

Օրիորդաց բարձրագոյն դպրոցներն ունին հինգ տարուայ դասընթաց, շաբաթական 24 ժամուայ պարապմունքով, միջին թուով օրական չորս ժամ. տեղական պայմաններիննայած կարող է դասընթացը մի կամ երկու տարով պակասել:

Բարձրագոյն դպրոցում անցնում են հետեւեալ առարկաները.

| Առարկաները                                            | Հարաթական<br>քանի ժամ | Քանի տարի   |
|-------------------------------------------------------|-----------------------|-------------|
| Բարոյականութիւն                                       | 1                     | 5           |
| Նապոններէն                                            | 4                     | 5           |
| Անգլիերէն                                             | 6                     | 5           |
| Մաթեմատիկա և բնագիտութիւնից (կենդ.,<br>բուս. և հանք.) | 3<br>2                | 4<br>1      |
| Նշխարհագրութիւն և պատմութիւն                          | 2                     | 4           |
| Առօրեայ տնտեսութիւն                                   | 4<br>6<br>8           | 3<br>1<br>1 |
| Գրութիւն և նկարչութիւն                                | 3<br>2                | 3<br>2      |
| Երգեցողութիւն                                         | 2<br>1                | 4<br>1      |
| Մարմնամարզութիւն                                      | 2 1/2                 | 5           |

Մրազրից դարձեալ երևում է, որ անգլիերէնին աւելի մեծ տեղ է դրուած, քան թէ եապոններէնին. բացի այս առարկաներից կարող են անցնել և՛ այն գեղարուեստները, որոնք օգտակար են կանանց համար (օր. երաժշտութիւն, նկարչութիւն պարեր կայլն):

Իշխանական դասակարգի աղջիկները համար կայ մի առանձին բարձրագոյն դպրոց էլ, որ 12 տալրուայ դասընթաց ունի. այստեղ երեքհարիւրից աւելի աշակերտուհիներ են սովորում:

Մասնաւորապէս մեծ քաղաքներում կազմակերպւում են յատկապէս կանանց համար ժողովրդական դասախօսութիւններ այնպիսի առարկաներից, որոնք դպրոցական դասընթացից դուրս են. օրինակ. նազասակի քաղաքում բժշկական դպրոցի ուսուցիչները դասախօսում են առողջապահութիւնից եւ մանուկների ճշգատարութեան մասին, որոնք իրանց հետաքրքրութեամբ մեծ ժողովրդականութիւն են վայելում:

Նապոնացի կնոջ կրթութիւնը ունեցել է և ունի իր հակառակորդները. սրանց կարծիքով իբր թէ կրթութիւնը եապոնացի կնոջ վարքութեամբ փոխելով նրան փչացնում է. այս բոլորը ջրւում են օտարերկրացիների ցուցմունքով, որոնք ասում են.

«Նապոնուհիները աչքի են ընկնում իրանց լայն ըմբռնողութեամբ և լաւ ընդունակութիւններով. նրանք արագ կերպով իւրացնում են զանազան գիտութիւններ և հասնում այնպիսի մտաւոր զարգացման, որով անհամեմատ աւելի բարձր

են կանգնում արևելքի միւս կանանցից. գովելի է նոյնպէս նրանց բարոյականութիւնը: Եւպոնուհիները՝ որպէս մայրեր՝ բարեխղճօրէն, խոհեմաբար ու սիրով են կրթում իրանց զաւակներին և այս կողմից յետ չեն մնում միւս քաղաքակիրթ երկրների կանանցից:

Եւպոնուհին իր կրթութեամբ ու զարգացումով զգալի քայլեր է արել և՛ կանանց ազատութեան խնդրում, Եւպոնացի շատ կանայք արդէն սկսել են հասարակական պատասխանատու պաշտօններ յանձն առնել: Մի եւպոնուհի՝ Սոգօ անունով՝ պարագում է փաստաբանութեամբ. նա Տոկիօ մայրաքաղաքի նըշանաւոր փաստաբաններից մէկն է. նրա ասած ճառերը խիստ գնահատւում, յարգւում են եւպոնացիներից որպէս պերճախօսութեան ու հետորոշութեան նմոյշներ:

Եւպոնիոն կրթութիւնը ամեն բանում ճանաչելով փրկարար հրեշտակ՝ ամեն անկիւնում բաց արեց զանազան տեսակ ուսումնարաններ. դպրոցական օրէնսդրութիւնից երեսուն տարի անցած՝ այն է 1902 թուին՝ արդէն նա ունէր 29,335 կրթական հիմնարկութիւններ, որոնցից 34-ը պետական, 27,625-ը հասարակական և 1,676-ը մասնաւոր են եղել: Դրանցում եղել են 110,104 դասատուներ և ուսուցչապետներ, իսկ սովորողներ 5,265,006. ուսումնական տարում իրանց դասընթացը վերջացրել են 901,621 մարդ: Արդէն գիտենք, որ կրթական հաստատութիւնների մէջ մեծ տեղ են բռնում ըսկզբնական կամ տարրական դպրոցները—27,010, որտեղ սովորելիս են եղել 4,980,604 մարդ: Ժողովրդի կրթական գործի համար մեծ ծախքեր են լինում և հետզհետէ սաստիկ շատանում են այդ ծախքերը. 1897 թուին ծախսուել է մօտ 22 միլլիոն, իսկ 1901—2-ուսում. տարում մօտ 50 (յիսուն) միլլիոն «են» («են»-ը անում է մօտ մի ըուբլի). սա Եւպոնիայի համար աչքի ընկնող առաջադիմութիւն է, որ այդպիսի խոշոր գումար է ծախսում կրթութեան համար:

Կրթական ծախքը սկզբում մեծ մասով հոգացւում էր համայնքների տուրքերով ու մասնաւոր նուիրատուութիւններով, Սակայն 1899 թ. կայսերական հրամանով կազմուեց «Լրթական ֆոնդ», որից նպաստներ են տրւում գիւղերի ու քաղաքների դպրոցներին. սրանով աւելի ու աւելի արագ են շատացել ու առաջ գնացել կրթական հիմնարկութիւնները:

Եւպոնիայի առաջադիմութեան պատկերը մի քիչ աւելի կատարեալ դարձնելու համար մի քանի խօսք էլ մամուլի մասին ասենք:

Հրատարակչական գործը տարւում է լայն չափերով: 1887

Թուին Ենպոնիայում տպուել է 9,548 տեսակ գիրք, իսկ 1897 թուին՝ 25,522: Այսպէս տաս տարի յետոյ հրատարակուող գրքերի քանակութիւնը աւելացել է մօտ  $2\frac{1}{2}$  անգամ: Սրանց մէջ բաւականին մեծ տեղ են բռնել գեղարուեստին վերաբերուող շքեղ պատկերազարդ հրատարակութիւնները: Յետագայ տարիներում մեծ քանակութեամբ լոյս են տեսել նիւթական օգուտ բերող գրքեր, ինչպէս օրինակ՝ երկրագործական, վաճառականական, արդիւնաբերական կայլն: Համեմատաբար կրօնական-բարոյական գրքեր քիչ են հրատարակուում: Ամենից շատ գրքեր են տպուել 1894 թուին, այն է 28,212 տեսակ. այնպէս որ ազգաբնակչութեան իւրաքանչիւր 1,600 մարդուն ընկնում է մի գիրք: 1894 թուից գրքերի հրատարակչական գործն սկսում է ընկնել շնորհիւ պարբերական հրատարակութիւնների շատանալուն:

Ենպոնիայում առաջին լրագիրը, որը իսկապէս արժանի է այդ անունան, լոյս է տեսել մօտաւորապէս 1872 թուին Տոկիօ մայրաքաղաքում. հրատարակիչն է եղել անգլիացի Բլեկ: Այնուհետև անհաւատալի արագութեամբ սկսել է աճել, բազմանալ լրագրերի ու ամսագրերի թիւը՝ բոլորովին դուրս մղելով ընթերցողների որոշ շրջանից գրքի գործածութիւնը: Պարբերական թերթերի համար ուշադրութեան արժանի է հետեւեալ ցուցակը.

|                      |     |       |         |          |
|----------------------|-----|-------|---------|----------|
| 1887 թ. դուրս է եկել | 470 | տեսակ | 96,000  | օրինակով |
| 1893 » »             | 802 | »     | 278,000 | »        |
| 1894 » »             | 814 | »     | 367,700 | »        |
| 1898 » »             | 829 | »     | 464,500 | »        |

Շատ կարելի է, որ պարբերական հրատարակութիւնների այդքան տարածուած լինելն է պատճառը, որ համեմատաբար այնքան քիչ են հասարակական գրադարանները. սրանց թիւը 50 է, 1-ը պետական, 14-ը հասարակական և 35-ը մասնավոր:

Ենպոնացի ժողովրդի առաջադիմութեան չափն աւելի հասկանալի դարձնելու համար պէտք է ասել, որ վերջին ժամանակներում միայն Տոկիօ մայրաքաղաքում հրատարակուում են 400 լրագիր և 300 ամսագիր՝ դուրս տալով ամսական '8 միլլիոն օրինակ:

Այս բոլորի հետ միացած զանազան գիտական հաստատութիւններ, ինչպէս օրինակ՝ Տոկիօի «գիտութեանց ճեմարանը» և ամեն տեսակ ընկերութիւններ աւելի ևս զարկ են տալիս երկրի առաջադիմութեանը: Ամենից աւելի հետաքրքիր ու տարածուած են «մանկավարժական ընկերութիւնները», որոնք գոյութիւն ունին իւրաքանչիւր քաղաքում և իւրաքանչիւր համայնքում: Ամենահին մանկավարժական ընկերութիւնը

հաստատուել է 1872 թուին Տոկիո մայրաքաղաքում: Մանկավարժական ընկերութիւնների գործունէութիւնը բազմատեսակ է. նրանք են հրաւիրում ժողովներ, որտեղ քննադատւում են մանկավարժական խնդիրներ. նրանք են հրատարակում մանկավարժական ամսագրեր. նրանք են կազմում դասագրքեր, ծրագրեր մշակում, ժողովրդի կրթական գործի մասին հետազոտութիւններ անում. նրանք են հիմնում ընդհանուր ու մասնագիտական կրթութիւն տուող դպրոցներ. նրանք են կազմակերպում դպրոցական ու դասական պիտոյքների ցուցահանդէսներ, ժողովրդական դասախօսութիւններ, կոնցերտներ, պարգէներ են տալիս ժողովրդի կրթութեանն առանձին ծառայութիւն անողներին ևայլն: Այս տեսակ ընկերութեան անդամ կարող են լինել թէ մանկավարժութեամբ պարապողները և թէ առհասարակ այն մարդիկ, որոնք հիտաքրքրւում են ժողովրդի զարգացման գործով: Ահա այս բոլոր փաստերն ի նկատի առած՝ շատ իրաւացի են ասում, որ Նապոնիայում ժողովրդի կրթական գործը ամենակարճ ժամանակում հասել է տյնալիսի հետեանքի, որ նա դրանով կարող է պատուաւոր տեղ բռնել քաղաքակիրթ երկրների շարքում:

ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆ

## ՂՐԻՄԻ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ

Պանդխտութեան դիւթիչ գաւազանը ձեռին՝ հայը դիմել է և դէպի հեռաւոր հիւսիս—Թաթարստան: Ախսարայ կոչուած քաղաքում, որ գտնւում էր Կազանի և Աստրախանի մէջ տեղը, 7 դար առաջ մօտ 40 հազար հայ բնակութիւն հաստատեցին: Սակայն այստեղ ևս բարեկեցիկ կացութիւն, ապահով վիճակ չգտնելով՝ նրանք ստիպուած եղան դիմել ավելի հեռաւոր վայրեր—Լեհաստանի, Ղրիմի և Մուդաւիայի կողմերը: Գաղթականական ամենամեծ հոսանքը շարժուել էր դէպի Ղրիմ—Սև ծովի հիւսիսային ափերը, որտեղ գնդուացիների Բարեշէն Կաֆայի կամ Թէոդոսիայի իշխանապետը սիրով յանձն առաւ տեղաւորել իր երկրում՝ տարագրուած հայերին, մանաւանդ որ հայ ազգի ջանասիրութեան և եռանդի բարի համբաւը վաղուց արդէն հասել էր նրա ականջին: